

ջանքով յառաջանալու վրայ են ուսման և կրթութեան մէջ : Սեօ շահունի տէրութիւնը իրենց վաճառականութենէն, երկրագործութենէն, այգեգործութենէն ու շերամ պահելէն . և աս արհեստները գրեթէ բոլորովին հայերուն ձեռքն է . անկէ զատ՝ իրենց դատաստանարանին ալ ամէն ծախքը իրենք կրտեսեն՝ տարին գրեթէ 10,000 բուպի վճարելով, որ 50,000 զուրուշ կրնէ : Բնուական պարոն Բապապ անունով մէկը դպրոց մը բացած է հոն 40 տղու համար . նաև Բողութեանց Յովսէփ կաթողիկոսը ուրիշ դպրոց մը հաստատած է հոն, որ օրէ օր կըյառաջանայ . քոյն ալ տպարան մը կայ, ուսկից զանազան գրքեր ելած են : Բագասէր Լազարեան իշխանները մասնաւոր ստակ կապած են աս Բթտէրխանի ազգայնոց օգտին համար, ինչպէս ըրած են նաև Վրիգորուպօլսոյ դպրոցին, և ուրիշ ազգային դպրոցներու : Բայց մենք հարկ կըսեպենք աս իշխաններուն ցեղին ու բարերարութեանցը վրայ առանձին խօսիլ աս օրագրիս մէջ, որպէս զի մեր ազգայինք մէկ կողմանէ ուրախանան՝ որ ինչուան հիմայ ալ գործնական կերպով ազգասիրութիւննին ցուցնողներ պակաս չեն մէջերնին . մէկալ կողմանէ ալ յորգորութիւն այնպիսիներուն հետևող ու նախանձաւոր ըլլալու ի բարին :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ուրիշն խրատ ասլու օրինակ :

ՇԱՏ մարդ կուզէ բժշկութիւն ծախել, բայց արհեստը չգիտնալուն համար՝ բժշկելու տեղը աւելի կըհիւանդացընէ կամ կըմեռցընէ . աւելի շատ մարդ կըգտնուի որ ուրիշներուն խրատող ըլլալու փափաք ունի, բայց կերպը չգիտնալով՝ օգուտ ընելու տե-

ղը փնաս կրնէ : Բայսպիսիները լաւ կրնեն որ գոնէ աս հարկաւոր կանոններս պահեն . այսինքն նախ՝ նային որ ոչ երբէք սաստիկ կամ կծու ըլլայ խրատը . երկրորդ՝ ատենէ դուրս չըլլայ . երրորդ՝ դիմացինին հասակին կամ վիճակին յարմար ըլլայ, այնպէս որ ծերուն տրուելու խրատը տղուն չտրուի, և ոչ տղուն տրուելիքը ծերուն . ոչ իմաստունինը տգիտին, և ոչ տգիտինը իմաստունին . ոչ արթուն մարդու տրուելիքը գինովին, և ոչ խելացիինը խենդին : Բայ կանոններս չպահողը փուճ տեղը գանգատ կրնէ թէ իր խրատը անօգուտ եղեր է . իսկ թէ նոյն կանոնները պահողը որչափ օգուտ կըբաղէ՝ հետևեալ դիպուածէն ալ կերենայ :

Ուրիշն անունով հռչակաւոր կատակերգակը գեղի մը մէջ օր մը իր մէկքանի բարեկամներուն իրիկուան հարկիք մը կրնէ . և որովհետեւ ինքը սովորութիւն ըրեր է եղեր կանուակէկ քնանալու, թողութիւն կըխընդդէ իր բարեկամներէն, ու դեռ սեղանը չմընցած կերթայ կըպառկի : Բոնց ուրախութիւնը՝ տանտիրոջը հոն չըլլալուն համար չպաղիր . իրաւ, կարգացող ու փիլիսոփայ մարդիկ են եղեր, բայց գինին խմելով քանի կերթայ գլուխնին կըտաքնայ, ու խօսակցութիւնը աշխարհքիս ունայնութե ու թշուառութեանցը վրայ կիյնայ . որը աս թշուառութիւնը մէջ կըբերէ, որը ան դժբախտութիւնը . որը փշտա վարդի մը կընմանցընէ մարդուս կեանքը որ առաւօտը կըբացուի՝ իրիկունը կըթափի, որը սուտ երազի մը որ մարդս քիչ մը ատեն կըխաբխըբէ, ու ետքը չարաչար կըտանջէ . վերջապէս խօսքը հոս կըբերեն թէ ալ աղէկ է որ մարդ մեռնի խալըսի աս կեանքէս, ու անդին յաւիտեան երջանիկ ըլլայ : Բայ գինովի փիլիսոփայութեանը վրայ մէյմէկ գաւաթ ալ նորէն կըխմեն, ու գլորտըկելով ոտը կելլեն՝ մէկբերան կըկանչեն . « Եթեմք, բարեկամներ, բաջութք

մեռնինք , . աս կըսեն ու կըսկսին
 գէպ 'ի գետը երթալ որ մէջը նե-
 տուին խղզուին : Սէջերնէն մէկը
 (որ անշուշտ քիչ խմած է եղեր) վար-
 պետութեամբ մը կըբաժնուի անոնց-
 մէ, ու կըվազէ Սոլիէն կըհասկը-
 ցնէ բանը : Սոլիէն սարսափած կը-
 ցատքէ անկողնէն , շուտ մը վերար-
 կուն վրան կառնէ՝ կըվազէ մէկալ-
 նոնց ետեւէն . երթայ տեւնէ որ ա-
 նոնք գետին քովը նաւակ մը գտեր
 ու մէջը մտեր են որ մէջտեղը եր-
 թան խղզուին . մէկքանի գեղացիներ
 ու դրացիներ ալ ասոնց միտքը հաս-
 կընալով կաշխատին որ դէմ կենան
 արգիլեն : Երեսը իրարու հետ կուր-
 տած ատեննին Սոլիէն վրայ կը-
 հասնի , « Ի՛նչ է աս , կըկանչէ , ի՛նչ
 կուի է ըրածնիդ » : — « Ելայ՝ սը-
 , ւոնց ըրածը , կըսեն անոնք . չեն թո-
 , ղուր որ գետին մէջտեղը երթանք
 , խղզուինք . դուն խելացի մարդ ես ,
 , Սոլիէն . դուն ըսէ , իրաւունք ու-
 , նինք թէ չէ . աս սուտ աշխարհքիս
 , վրայ ապրելէն ի՛նչ կեղէն . ալ աղէկ
 , չէ՞ որ ժամ մը առաջ մեռնինք ազա-
 , տինք » : — « Եւ աղէկ բան մտա-
 , ծեր էք , կըսէ Սոլիէն , շատ խե-
 , լացի բան . բայց ես զձեզ ինծի բա-
 , ընկամ կըկարծէի . աս ըլլալու բան
 , է որ դուք անդիի աշխարհքը եր-
 , թալ ուղէք , ու զիս ձեր երջանկու-
 , թենէն զուրկ թողուք աս աշխարհ-
 , քիս վրայ » : — « Իրաւունք ունի
 , Սոլիէնը , կանչեց մէկը . աս ընելու
 , բան չէր . թողութիւն ըրէ , սխալե-
 , ցանք՝ բարեկամ . եկուր դուն ալ
 , մէկտեղ խղզուինք » : — Ինչո՞ւ չէ
 , ըսաւ Սոլիէն . իմ ուղածս ալ ան
 , է . բայց կեցէք մէյմը մտածենք
 , թէ ինչ է ըրածնիս . մենք մեզի ա-
 , նուն կուղենք հանել , ու այսպիսի
 , փառաւոր գործողութիւնը գիշեր
 , ատեն կընենք . ասիկայ խելք չէ .
 , լսողները պիտի ըսեն թէ ո՞վ գի-
 , տէ՛ կերակուրէն ետքը գինին գլուխ

նին զարկեր է , բան մըն է ըրեր
 , են : Զէ , սիրելիք . վաղը , անօթի
 , փորանց , ցորեկ ատեն , ամէնուն
 , առջեւ պէտք է նետուինք ջու-
 , ըր » : — « Ելեքն ալ ատ է »
 , կանչեց մէկը . մէկալն ալ թէ Շի-
 , տակը , Սոլիէն մեզմէ շատ խելա-
 , ցի է » : Գնացին ամէնքն ալ պառ-
 , կեցան . երկրորդ օրը ալ հարկ չե-
 , ղաւ հետերնին կուրտելու որ ջուրը
 չնետուին :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Յարասութիւն 'ի սաղմոսն ճԻԹ :

Առ քեզ , Աստուած , կարգամ սրտիս 'ի խորոց ,
 Ի սուրբ երկիւղ ընդոստուցեալ անձնագատ .
 Գիտակցութեան հարեալ անդու 'ի խայթոց ,
 Բայց 'ի քէն ոչ յուսահատ :
 Լուր , պաղատիմ , օրհասական իմ ձայնիս ,
 Որ արարիչդ ես և ծնող մահացուաց .
 Միթէ յագորդ ինչ քո ցասման ստեղծեր զիս
 Վրէն թափեալ 'ի ժանեաց :
 Արի յօգնել , ձգեալ ըզձեռդ 'ի բարձանց
 Ինձ ծրփելոյս յալիս կենաց աղցաւոր .
 Եւ ո՞ր երէք սուրբ թըւեսցի քոց աչաց
 Թէ խիստ կացցես դատաւոր :
 Ներող է տէր , ասէն մարդիկ , որկարաց .
 Չարեաց մերոց յաղթէ անշուշտ նորայն գութ .
 Եւ ընդ մեղաց փութան շաւիղ ցանդ անգարծ ,
 Եւ չիք նոցին խոչ և խուժ .
 Այլ 'ի վերջէ տեսեալ ըզքոց գեհնէնին
 Մինչ որոք նոցա 'ի գրունս մահու ժամանէն ,
 Ոչ զըջացեալք՝ այլ ահաբեկ պաղատին .
 Ընդ վայր ըզքեզ աղերսեն :
 Այս վաղորդայն է այնր ահեղ գիշերոյ .
 Ընդ այս խորհուրդ ես յանձն իմ հէգ գումարիմ ,
 Եւ 'ի տեսիլ մեղսածաթաւս իմ հոգւոյ
 Զարհուրագին վարանիմ :
 Սակայն դու տէր , Իսրայէլի խոստացար
 Զի՛նդ քով ձեռամբ կեցցէ՛ մեռցի յանդորրու .
 Ի սկզբանէ աւուրց նորին ցըկատար
 Եղեալ նըմին այցելու :
 Եթէ յանցեաւ , ասէս , անդրէն զըջացի .
 Թող ներեսցէ որոց ըզնա նեղեցին ,
 Սուրբ ինձ ցուցցէ սիրտ որպէս ես ըստեղծի ,
 Յայնժամ և մեղք իւր թողցին :
 Սովին յուսով մեռայց վըստահ կամակար .
 Յորժամ յատենդ երևեցայց ահագին ,
 Ողորմութիւնդ կալցի զմեղաց իմ նըժար .
 Յասման քո զէնք կապտեսցին :

ՓԻՐՈՆ

Կերթող Գաղտնի :